

Analytical Bulletin of Armenian and Regional Studies
ISSN: 1829-4502
e-ISSN: 2953-8254
Journal homepage: https://analytical-bulletin.cccs.am/index.php/ab/index

CENTER FOR CULTURE
AND
CIVILIZATION STUDIES
FOUNDATION

Anna Gevorgyan
"Armen Israelyan, Iran-Azerbaijan Relations in the Twenty-Year Historical Period (2003-2023). Yerevan, Copy Print, 2023. 286 pp."

To cite this article: Anna Gevorgyan. "Armen Israelyan, Iran-Azerbaijan Relations in the Twenty-Year Historical Period (2003-2023). Yerevan, Copy Print, 2023. 286 pp." *Analytical Bulletin of Armenian and Regional Studies (CCCS)* 19 (2024): 103-111 DOI: 10.56673/18294502-aga2024.19.2

To link to this article: DOI: 10.56673/18294502-aga2024.19.2

Published online:

06 October

Submit your article to
this journal

DOI 0.56673/18294502-aga2024.19.2

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արմեն Իսրայելյան, Իրան-Ադրբեջան հարաբերությունները քսանամյա պատմափուլում (2003-2023). Երևան, Քոփի Փրինթ, 2023. 286 էջ

Armen Israelyan, Iran-Azerbaijan Relations in the Twenty-Year Historical Period (2003-2023). Yerevan, Copy Print, 2023. 286 pp.

DOI: 10.56673/18294502-aga2024.19.2
Ներկայացվել է՝ 28 հունիսի 2024
Ընդունվել է՝ 15 հուլիսի 2024

«Իրան-Ադրբեջան հարաբերությունները քսանամյա պատմափուլում (2003-2023)» գիրքը համապարփակ պատկերացում է տալիս այս երկու հարևան երկրների բազմակողմ ու բարդ հարաբերությունների վերաբերյալ: Գրքի հեղինակ Արմեն Իսրայելյանը համակարգված կերպով քննում է պատմական, էթնո-մշակութային, կրոնական և աշխարհաքաղաքական գործոնները, որոնք ձևավորում են նրանց փոխազդեցությունները: Աշխատանքը կարևոր բաց է լրացնում հայաստանյան գիտական գրականության ասպարեզում՝ անդրադառնալով Իրանի ու Ադրբեջանի միջև եղած այնպիսի խնդիրների (օրինակ քիչ լուսաբանված Նախիջևանի հարցը, Կասպից ծովի խնդիրը կամ հաճախ ուռճացված հայկական գործոնի հարցը), որոնք հաճախ շրջանցվում կամ ներկայացվում են ուռճացված մոտեցումներով:

Գրքի առաջին գլուխը, որը վերնագրված է ««Միլիոնավոր ադրբեջանցիների» և «Հարավային Ադրբեջանի» նարատիվները՝ որպես Իրան-Ադրբեջան հարաբերությունների օրակարգը

ձևավորող գործոններ», ներկայացնում է «միլիոնավոր ադրբեջանցիների» և «Հարավային Ադրբեջանի» մասին պատմական և սոցիալ-քաղաքական նարատիվները, որոնք առանցքային դեր են կատարում Իրան-Ադրբեջան հարաբերությունները հասկանալու համար: Հեղինակը մանրամասն նկարագրում է, թե ինչպես են այս նարատիվները օգտագործվում երկու պետությունների կողմից մի կողմից տարածքային և մշակութային պահանջներ ձևակերպելու, մյուս կողմից՝ ադրբեջանական քաղաքականության ծավալապաշտական բնույթը ցույց տալու համար: «Հարավային Ադրբեջան» հասկացությունը վերաբերում է Իրանի այն շրջաններին, որտեղ բնակվում է զգալի թյուրքախոս բնակչություն: Ադրբեջանը հավակնություններ ունի այս բնակչության նկատմամբ.այդ հավակնությունը ձևակերպված է «Թավրիզը Ադրբեջան է» պնդմամբ (էջ 29): Գրքում մանրամասն նկարագրվում են պատմական այն զարգացումները, որոնց արդյունքում Իրանի այս նահանգները դարձել են թյուրքախոս: Հեղինակը մանրամասն քննել է այս հարցերի անդրադարձները իրանական ու ադրբեջանական պատմագիտության մեջ, ցույց տվել դրանց միջև եղած հակասություններն ու դրանց օգտագործումը քաղաքական նպատակներով:

«Միլիոնավոր ադրբեջանցիներ» նարատիվին անդրադառնալով՝ հեղինակը ընդգծում է էթնիկ և մշակութային ընդհանուր կապերի շեշտադրումը այդ նարատիվի մեջ: Դրանք ամփոփված են Ադրբեջանի ու Թուքիայի կողմից շրջանառվող այն թեզի մեջ, թե «Իրանում բնակվող «25 միլիոն ադրբեջանցիները» (նկատի ունենալով թյուրքախոս բնակչությանը) զրկված են իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքից» (էջ 41): Գլուխը մանրամասն վերլուծում է, թե ինչպես են այս պատումները ազգայնական տրամադրություններ խթանում Իրանի հյուսիսում և

ազդում Ադրբեջանի հետ դիվանագիտական փոխհարաբերությունների վրա: Միաժամանակ, հեղինակը հանգամանորեն փաստարկում է, թե ինչու 25 միլիոն ադրբեջանցիների կամ վերջին տարիներին անգամ 50 միլիոն ադրբեջանցիների մասին պնդումը զուրկ է փաստական հիմնավորումից՝ կապված և՛ թվի, և՛ էթոնանվանման հետ (էջ 41): Կարևոր է հեղինակի մոտեցումը Իրանի թյուրքախոս բնակչության՝ երեք խմբերի բաժանմանը: Ըստ այդ բաժանման՝ «Իրանի թյուրքախոսների հատվածներն են.

- Թյուրքախոսներ, որոնք իրենց համարում են իրանցի և դեմ են անջատողականությանը (նրանք մեծամասնություն են կազմում),
- Թյուրքախոս պատգամավորներ և մտավորականներ, որոնց քայլերը, թեև ուղղված չեն Իրանի Իսլամական Հանրապետության համակարգի փլուզմանը, սակայն որոշ դեպքերում նրանց գործունեությունն այնպիսի դրսևորումներ է ստանում, որոնք անջատողականության տարրեր են պարունակում,
- Փոքրաթիվ, սակայն նշանակալի ազդեցություն ունեցող խմբավորումներ, որոնք ստանում են Թուրքիայի և Ադրբեջանի ուղղակի աջակցությունը» (էջ 44):

Հեղինակն անդրադառնում է այս պատումների արդյունքում Ադրբեջանի՝ Իրանի քաղաքական ու մշակութային պատմության դեմքերին ադրբեջանցի ներկայացնելու քաղաքականությունը: Այսպես, «Ադրբեջանը բացի իրանցի բանաստեղծ Նիզամի Գանջավիին, Նադիր շահին ու իրանցի պատմական այլ դեմքերին «ադրբեջանցի» ներկայացնելուց, յուրացնում է նաև իրանական մշակութային արժեքները, ինչպիսիք են՝ թառ երաժշտական գործիքը, ճոկան (Polo) մարզախաղը, «Յալդայի գիշերվա» Շաբ-է Յալդա տոնը» և այլն (էջ 53):

«Կրոնի դերը Իրան-Ադրբեջան հարաբերություններում» գլխում հեղինակն անդրադառնում է այն խնդրին, թե ինչպիսի վճռորոշ դեր է խաղում կրոնը Իրանի և Ադրբեջանի երկկողմ հարաբերություններում: Հեղինակը մանրամասն ուսումնասիրում է կրոնական համայնապատկերը՝ նշելով, որ, թեև Իրանը՝ որպես շիա իսլամական երկիր, կիսում է այդ կրոնական պատկանելությունը Ադրբեջանի հետ, այնուամենայնիվ, Ադրբեջանի աշխարհիկ կառավարումն ու հակակրոնական քաղաքականությունը կտրուկ հակադրվում են Իրանի աստվածապետական համակարգին: Գլուխը քննարկում է, թե ինչպես է կրոնը մի կողմից կամրջում, մյուս կողմից՝ բաժանում երկու պետություններին՝ ազդելով երկրների թե՛ ներքին քաղաքականության և թե՛ միջազգային դիվանագիտության վրա:

Հեղինակը նկարագրում է, թե ինչպես Իրանը նորանկախ Ադրբեջանի հետ հարաբերություններում որպես փափուկ ուժի գործիք օգտագործել է Ադրբեջանի իսլամական կուսակցության հիմնումն ու տարբեր կրոնամշակութային հիմնադրամների ու կազմակերպությունների գործունեությունը: Հեղինակի պնդմամբ՝ այս գործիքակազմով Իրանին չի հաջողվել հասնել ցանկալի քաղաքական արդյունքի ո՛չ Ադրբեջանում, ո՛չ նախկին խորհրդային մեկ այլ հանրապետություն Տաջիկստանում (էջ 82): Այս ձախողումը գիրքը բացատրում է մի կողմից Իլհամ Ալիևի կառավարամն ժամանակշրջանում սաստկացած հակաիսլամական քաղաքականությամբ, մյուս կողմից՝ Իսրայելի՝ Ադրբեջանին ցուցաբերած օգնությամբ նաև այդ ոլորտում՝ հաշվի առնելով, որ Իսրայելը Ադրբեջանում շիա գործիչների ազդեցության թուլացումը ընկալում է որպես Իրանի ազդեցության թուլացում (էջ 90):

Հեղինակը պնդում է, որ եթե մինչև 2020 թվականը Իրանն էր կրոնական ուղերձներով սպառնում Ադրբեջանին, ապա

Արցախյան 2020 թվականի պատերազմից հետո Ադրբեջանը նույնպես նույն գործիքն է օգտագործում ընդդեմ Իրանի (էջ 118):

Գրքի երրորդ՝ «Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը Իրան-Ադրբեջան հարաբերություններում» գլուխը անդրադառնում է Կասպից ծովի իրավական կարգավիճակին, որը վիճելի հարց է Իրան-Ադրբեջան հարաբերություններում: Այս գլուխը հանգամանորեն ներկայացնում է Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ պատմական պայմանագրերը և այս խնդրի շուրջ վերջին բանակցությունները: Հեղինակը քննարկում է օրենսդրական շրջանակների բարդությունը և Կասպից ծովի ռազմավարական նշանակությունը (մասնավորապես էներգետիկ ռեսուրսների առումով) և ի հայտ բերում առանցքային հարցերը, որոնք հուզում են Իրանին այդ թեմայի շրջանակներում: Դրանք են.

- Կասպից ծովի իրավական վերջնական կարգավիճակի հարց,
- Կասպից ծովի անվտանգություն և ապառազմականացում,
- Կասպից ծովում արտատարածաշրջանային ուժերի ներկայության բացառում (էջ124):

Մերձափնյա պետությունների՝ այդ թվում Իրանի և Ադրբեջանի մրցակցային շահերը այս հարցերի վերաբերյալ հանգեցրել են երկարատև քննարկումների և դիվանագիտական ջանքերի՝ համաձայնության հասնելու համար: Գիրքը մանրակրկիտ վերլուծություն է տալիս, թե ինչպես են Կասպից ծովին առնչվող իրավական, ռազմական և տնտեսական շահերը ձևավորում երկկողմ հարաբերությունները: Անդրադառնալով Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ 2018 թվականին ստորագրված կոնվենցիային՝ հեղինակը նշում է, որ այն ընդհանուր գծերով նման է միջուկային համաձայնությանը, երբ բոլոր կողմերը, անկախ իրենց տարաձայնություններից, տվյալ իրավիճակում բավարարված էին (էջ 154): Հեղինակը պնդում է,

սակայն, որ, հաշվի առնելով կոնվենցիայի վերաբերյալ Իրանի լուրջ վերապահումները, Իրանի դիրքորոշումը վերջնական չէ և յուրաքանչյուր պահի կարող է վերանայվել (էջ 155):

Գրքի չորրորդ գլուխը «Նախիջևանի դերն Իրան-Ադրբեջան հարաբերությունների ձևավորման գործում» խորագիրն ունի: Նախիջևանը՝ Ադրբեջանի էքսկլավը, որը սահմանակից է Հայաստանին, Իրանին և Թուրքիային, ռազմավարական դեր ունի Իրան-Ադրբեջան հարաբերություններում: Հեղինակը ներկայացնում է Նախիջևանի ռազմավարական դերակատարման զարգացումը պատմական համատեքստում և նրա աշխարհաքաղաքական նշանակությունը՝ ընդգծելով նրա դերը որպես ոչ միայն տարանցիկ և առևտրային հանգույց, այլ նաև հաշվի առնելով խնդրի կրոնաքաղաքական ու անվտանգության տեսանկյունը (էջ 156): Գլխում քննարկվում է, թե ինչպես են Իրանի առանձնահատուկ հարաբերությունները Նախիջևանի հետ հեշտացնում տնտեսական փոխհարաբերությունները և ուժեղացնում նրա քաղաքական լծակները: Միաժամանակ, հեղինակն ընդգծում է Իրանի աճող անհանգստությունը Նախիջևանի ռազմականացման խնդրի առնչությամբ (էջ 162): Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես է Նախիջևանը հանդես գալիս և՛ որպես կամուրջ, և՛ որպես քաղաքական-տնտեսական հնարավոր ընդհարումների թատերաբեմ Իրանի ու Ադրբեջանի հարաբերությունների համատեքստում՝ հաշվի առնելով տարածաշրջանի կարևորությունը հատկապես «միջին միջանցքի»[1] համատեքստում (էջ 173):

Գրքի հինգերորդ՝ «Հայկական գործոնն Իրան-Ադրբեջան հարաբերություններում» գլխում հեղինակը քննարկում է, թե ինչպես է Լեռնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի

[1] Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային ուղի:

միջև երկարատև հակամարտությունը էական ազդեցություն ունեցել նաև Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա: Այս գլուխը քննում է Իրանի ջանքերը՝ նուրբ հավասարակշռման դիրքորոշումը Ադրբեջանի տարածքային ամբողջականությանն աջակցելու և Հայաստանի հետ ջերմ հարաբերություններ պահպանելու միջև: Հեղինակը քննարկում է, թե ինչպես են Իրանի դիվանագիտական դիրքորոշման վրա ազդում նրա տարածաշրջանային ռազմավարությունը, էթնիկ նկատառումները և տնտեսական շահերը: Գլուխը ներկայացնում է պատկերացումներ այն մասին, թե ինչպես է հայկական հարցը բարդացնում Իրան-Ադրբեջան հարաբերությունները և ազդում տարածաշրջանային ավելի լայն դինամիկայի վրա: Միաժամանակ, հեղինակը պնդում է, որ Ադրբեջանը Իրան-Հայաստան հարաբերություններում լարվածություն առաջացնելու, իր կողմից մշակված քարոզչական կեղծ նարատիվները տարածելու, դրանք հայ-իրանական օրակարգի հարց դարձնելու նպատակով հաճախ օգտվում է այն հանգամանքից, որ Հայաստանի ու Իրանի միջև տեղեկատվության ոլորտում առկա է ոչ արդյունավետ համագործակցություն (էջ 208):

Գրքի եզրափակիչ գլուխը վերնագրված է «Իսրայելի գործոնն Իրան-Ադրբեջան հարաբերություններում» և համապատասխանաբար անդրադառնում է Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա Իսրայելի ազդեցությանը: Այս գլխում հեղինակը քննարկում է այն խնդիրը, որ Իսրայելի հետ Ադրբեջանի ռազմավարական գործընկերությունը (մասնավորապես պաշտպանության և հետախուզության ոլորտներում) մարտահրավեր է Իրանի համար, որն Իսրայելին դիտարկում է որպես առաջնային հակառակորդ: Հեղինակը պնդում է, որ Իսրայելի գործոնի շոշափելի ակտիվացում է տեղի ունեցել 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո: Այս հանգամանքը հեղինակը բացատրում է

այն հանգամանքով, որ Ադրբեջանը, պատերազմի արդյունքներով պայմանավորված, ոչ միայն նախկինի պես չէր կաշկանդվում Իսրայելի հետ իր ռազմական համագործակցությամբ, այլև, միտումնավոր Իրանի հետ հարաբերությունները սրելով, նաև քաղաքական հարաբերությունների վերանայում է իրականացրել՝ Իսրայելում դեսպանություն բացելու որոշում կայացնելով (էջ 213): Հեղինակը մանրամասն վերլուծում է այս զգայուն հարաբերությունների հետևանքները՝ նկարագրելով, թե ինչպես է Ադրբեջանը կողմնորոշվում և՛ Իրանի, և՛ Իսրայելի հետ իր հարաբերություններում: Միաժամանակ, հեղինակը պնդում է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը Հարավային Կովկասի նկատմամբ իր քաղաքականությունը մշակելիս հիմք է ընդունում այն իրողությունը, որ Իսրայելն ու Ադրբեջանը բացահայտ ընդգծում են Իրանի դեմ համատեղ գործելու իրենց նպատակադրության մասին (էջ 249):

Այսպիսով, գիրքը ներկայացնում է Իրան-Ադրբեջան հարաբերությունների մանրամասն և խորաթափանց վերլուծություն՝ ընդգրկելով գործոնների լայն շրջանակ, որոնք ազդում են նրանց երկկողմ փոխգործակցության վրա: Յուրաքանչյուր գլխի թեման լավ ուսումնասիրված է և ներկայացնում է հավասարակշռված տեսակետ Իրանի և Ադրբեջանի միջև բազմակողմ հարաբերությունների վերաբերյալ: Հեղինակն օգտագործել է առաջնային կարևոր աղբյուրներ, վերլուծել պաշտոնական մի շարք փաստաթղթեր, հայտարարություններ, քննել այս թեմաների վերաբերյալ առկա գիտական գրականությունը: Թեև գիրքը տարբեր գլուխների շրջանակներում անդրադառնում է նաև Ադրբեջան-Ռուսաստան, Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններին ու ընդգծում, թե ինչու չկա առանձին անդրադարձ Լեռնային Ղարաբաղի խնդրին երկու երկրների հարաբերությունների համատեքստում, այնուամե-

նայնիվ կարծում ենք, որ գիրքը մեծապես կշահեր, եթե վերոնշյալ թեմաները նույնպես առանձին գլուխների տեսքով անդրադարձի արժանանային։ Այդ հավելումը ավելի ամբողջական ու համընդգրկուն կդարձներ հեղինակի կարևոր աշխատանքը՝ ցույց տալու Իրանի հարավկովկասյան քաղաքականության վրա ազդող բոլոր շերտերի նրբերանգները։

Սրանով հանդերձ, սակայն, գիրքը արժեքավոր ռեսուրս է գիտնականների, քաղաքականություն մշակողների և բոլոր նրանց համար, որոնք հետաքրքրված են Հարավային Կովկասում Իրանի բալանսավորման քաղաքականությամբ։ Հեղինակը կարողացել է հմտորենհամադրել պատմական համատեքստերի քննությունը ժամանակակից աշխարհաքաղաքական վերլուծության հետ՝ առաջարկելով համապարփակ ըմբռնում առկա խնդիրների վերաբերյալ։

Աննա Գևորգյան
Երևանի պետական համալսարան
anna.gevorgyan@ysu.am